ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

26.02.2021թ.
Ժամը 09[25]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության 1-ին բաժնի պետ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ՍՎ ԱԾ շահագործման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սիմոնյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի պետ Ա.Ամիրյան:
Բացակայում է ՀՀ ՋՈՒ ՍՎ ԱԾ պլանավորման բաժնի պետ, գնդապետ Դ. Սերոբյանը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Արպանիվ» ՍՊԸ
2	«Ավտոբատ» ՍՊԸ
3	«Հույս-Սեդան» ՍՊԸ
4	«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Ամիրյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «Արպանիվ» ՍՊԸ-ի, «Ավտոբատ» ՍՊԸ-ի, «Հոյս-Սեդան» ՍՊԸ-ի՝ հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի՝ հայտով ներկայացրած փաստաթղթերից հավելված 1.1-ը չի համապատասխանում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ում բացակայում են ապրանքների ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 26.02.2021թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: 02.03.2021թ. շարունակելով նիստը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Ամիրյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/1» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ է ներկայացրել 4 մասնակից.

ՁՀ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվ. ընդհանուր գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների				Ծանոթություն
					անվանումները	գնային առաջարկները			
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը	
1	Ավտոմեքենաների անիվներ	հատ	700	52,500,000	«Արպանիվ» ՍՊԸ	43,632,167	8,726,433	52,358,600	Բանակցություն
2	Ավտոմեքենաների անիվներ	հատ	300	15,000,000	«Արպանիվ» ՍՊԸ	11,584,500	2,316,900	13,901,400	Բանակցություն
3	Ավտոմեքենաների անիվներ	հատ	300	49,500,000	«Արպանիվ» ՍՊԸ	41,084,500	8,216,900	49,301,400	Բանակցություն
4	Ավտոմեքենաների անիվներ	հատ	300	48,000,000	«Արպանիվ» ՍՊԸ	33,584,500	6,716,900	40,301,400	Բանակցություն
5	Ավտոմեքենաների անիվներ	հատ	180	30,600,000	«Արպանիվ» ՍՊԸ	23,750,700	4,750,140	28,500,840	«Արպանիվ» ՍՊԸ
					«Ավտոբատ» ՍՊԸ	24,696,000	4,939,200	29,635,200	
6	Ավտոմեքենաների անիվներ	հատ	450	67,500,000	«Արպանիվ» ՍՊԸ	51,501,750	10,300,350	61,802,100	Բանակցություն
7	Ավտոմեքենաների անիվներ	հատ	300	51,000,000	«Արպանիվ» ՍՊԸ	36,334,500	7,266,900	43,601,400	«Արպանիվ» ՍՊԸ
					«Ավտոբատ» ՍՊԸ	39,342,500	7,868,500	47,211,000	
8	Ավտոմեքենաների անիվներ	հատ	48	16,800,000	«Արպանիվ» ՍՊԸ	10,173,520	2,034,704	12,208,224	«Արպանիվ» ՍՊԸ
					«Ավտոբատ» ՍՊԸ	10,499,000	2,099,800	12,598,800	
9	Ավտոմեքենաների անիվներ	հատ	140	12,740,000	«Արպանիվ» ՍՊԸ	9,839,433	1,967,887	11,807,320	«Արպանիվ» ՍՊԸ
					«Ավտոբատ» ՍՊԸ	10,605,000	2,121,000	12,726,000	
10	Ավտոմեքենաների անիվներ	հատ	460	50,600,000	«Արպանիվ» ՍՊԸ	41,146,233	8,229,247	49,375,480	Բանակցություն
11	Ավտոմեքենաների անիվներ	հատ	300	49,200,000	«Արպանիվ» ՍՊԸ	40,834,500	8,166,900	49,001,400	Բանակցություն

12	Կոտակիչ մարտկոցներ	հատ	409	10,225,000	«Արպանիվ» ՍՊԸ	6,250,202	1,250,040	7,500,242	«Արպանիվ» ՍՊԸ
					«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ	8,353,825	1,670,765	10,024,590	
					«Հույս-Սեդան» ՍՊԸ	Սխալ գին			
13	Կոտակիչ մարտկոցներ	հատ	450	17,100,000	«Արպանիվ» ՍՊԸ	11,114,250	2,222,850	13,337,100	«Արպանիվ» ՍՊԸ
					«Հույս-Սեդան» ՍՊԸ	14,129,250	2,825,850	16,955,100	
14	Կոտակիչ մարտկոցներ	հատ	200	12,600,000	«Արպանիվ» ՍՊԸ	8,223,000	1,644,600	9,867,600	«Արպանիվ» ՍՊԸ
					«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ	10,400,000	2,080,000	12,480,000	
					«Հույս-Սեդան» ՍՊԸ	10,450,000	2,090,000	12,540,000	

3.2 Բոլոր մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/, բացի «Հույս-Սեդան» ՍՊԸ-ի 12-րդ չափաբաժնից, մասնավորապես ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի դ) պարբերության և «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի համաձայն՝ մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյուներում տառերով կամ թվերով նշված գումարների լումարները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը: Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Հույս-Սեդան» ՍՊԸ-ի հայտը 12-րդ չափաբաժնի մասով, քանի որ վերջինիս նշված ԱԱՀ-ն սխալ է հաշվարկված (կլորացումը սխալ է կատարվել), ինչն էլ իր հերթին հանգեցրել է նրան, որ ընդհանուր գինը սխալ է նշված:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/1» ծածկագրով ընթացակարգի 1-ից-4-րդ, 6-րդ, 10-րդ, և 11-րդ չափաբաժիններին հայտ է ներկայացրել մեկ մասնակից՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները 02.03.2021թ. որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով 05.03.2021թ. ժամը 10:00-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ: Նշված օրը և ժամին «Արպանիվ» ՍՊԸ-ն չներկայացավ բանակցություններին, ուստի վերջինիս առաջարկած գները մնացին առանց փոփոխության:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Ամիրյան)

4.1 11.03.2021թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում՝ բոլոր չափաբաժինների մասով (1-ից 14-րդ չափաբաժիններ) ընտրված մասնակից ճանաչվեց «Արպանիվ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ա. Ամիրյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Տ. Մաթևոսյան
Գնահատող	Ս. Պետրոսյան
Գնահատող	Ա. Սիմոնյան
Գնումները համակարգող՝	Ա. Ամիրյան